ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-24/1 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թվային հետախուզության լաբորատորիայի վերակառուցման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 27.03.2024թ. N 93/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.04.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Ոսկանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Դ.Հարությունյանը, Գ.Գևորգյանը, Ս.Մանուկյանը, Կ.Բայբուրտյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

-ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Հ.Ոսկանյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-24/1 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու համար 28.03.2024թ. էլեկտրոնային փոստի միջոցով հրավեր էր ուղարկվել՝ «ՏՐԱՆՍՊԱԽԱԳԻԾ» ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ-ին (Հասցե՝ ք.Երևան, Դավիթ Անհաղթի փողոց 23, transproject@mail.ru, հեռ. 093 31-96-81):

-ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար «ՏՐԱՆՍՊԱԽԱԳԻԾ» ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ-ն 02.04.2024թ. հայտ է ներկայացրել, որի առաջարկված գինը հետևյալն է.

Հ/Հ	Հ/Հ	Մասնակցի անվանումները	Աշխատանքի անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			նախահաշվային ընդհանուր գինը ՀՀ դրամ
				ներկայացրած գինը՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գինը՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«ՏՐԱՆՍՊԱԽԱԳԻԾ» ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թվային հետախուզության լաբորատորիայի վերակառուցման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ	377 000	20 %	452 400	**452 900**

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4" <u>Հայտերի ուսումնասիրության արդյունքների մասին</u>

Քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումը իրականացնել նույն նիստի ընթացքում:

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ» ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ-ի հայտը արձանագրեց, մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, լիցենզիաները, սակայն «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Մասնակիցը հրավերով նախատեսված որպես նմանատիպ համարվող նախկինում կատարված պայմանագիր ներկայացրել է 02.12.2021թ. կնքված թիվ 11/124Գ-2021 ծածկագրով գնման պայմանագիրը, սակայն բացակայում են վերընշված պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ-2, թիվ 3 և թիվ-3"1 հավելվածները, որը հնարավորություն չի տալիս գնահատող հանձնաժողովին գնահատելու այդ պայմանագրի պատշաճ կատարումը և տվյալ չափանիշի համար նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը:

5" Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.8 կետի՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-ՊԵԿ-ՀՄԱ-ԽԱՇՁԲ-24/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ» ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

-Նիստը վերսկսել՝ 2024 թվականի ապրիլի 5-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Ոսկանյան

Անդամներ՝ Դ.Հարությունյան

Գ.Գևորգյան

Ս.Մանուկյան

Կ.Բայբուրտյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան